ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՉՈՒՆՔ

— Հունվարի 3-ին Կիպրոսի Լեռնային գավառում տեղի ունեցած երկրաշարժից ավերակների տակից հանված վիրավորների թիվը հասնում է 20—22 հոգու։

— Ֆրանսիայի նախարարների խորհուրդը հաստատել է Ալժիրում գտնվող ֆրանսիական զորքերի հրամանատարի առաջարկությունը՝ Ալժիրի հարավային սահմանների երկայնքով ռազմական նոր գծեր անցկացնելու մասին։

— Ֆրանսիայի կառավարությունը հրամայել է Ալժիրում գտնվող ֆրանսիական զորքերի հրամանատարին՝ ուղարկել Ֆրանսիա 4 հետևակային գնդեր և 1 հեծելազորային գունդ։ Այդ զորքերը Ֆրանսիա կհասնեն հունվարի 15-ից մինչև փետրվարի 1-ը

հաստատակամությունն չունեցող անձինք։

Թէ ունակութիւն արած ծխողների վիճակը որչափ ծանրանում է, ինչ նեղութիւններ են կրում, երբ թամբաքուն պակասում է, ինչ զոհաբերութիւններ չէին անիլ մի կտոր մխոցին համար,—ամենքը չատ բան լսած ու տեսած կը լինին։ Բաւական է ասել, որ նրանք չեն մարսում կերածը առանց ծխելու, ձեռքը բանի չէ գալիս առանց ծխելու, չեն քնում, չեն զարթնում առանց ծխելու, մի խօսքով նրանք կատարեալ ստրուկ են ծխախոտի թմրեցուցիչ ազդեցութեան, որ կաշկանդում է մտածողութիւնը, ջընդում ուշադրութիւնը և թուլացնում յիշողութիւնը։

Պատմում են, որ մի օր Տուլօնից բերուած քրէական յանցաւորների մի խումբ Լիօնի բանդերից մէկում պիտի տեղաւորէին։ դրանք եկել էին քաղցած, ծարաւ, յոգնած, ոտները չղթայակապ, չոգեկառքից դուրս գալով անմիևնոյն էլ մտածում հացի, գինու, հանգստութեան վերայ, այլ որ իրենց մի քիչ թամբաքու տան ծխելու։

Բալզաքն ասում է. «Հացի և թամբաքուի ընտրութեան մէջ, ծխողը միշտ նախապատուում է երկրորդը։

Այսպէս հանքերի գետնափորումի մի քանի օրով կենդանի թաղուածները դուրս հանելուց, չեն տրտնջացել ոչ հացի, ջրի նեղութեան համար, այլ թամբաքուի։

Թամբաքուի պակասութիւնից, մեզ պատահել է տեսնել և լսել, թէ մեր թուրքերը ինչպէս ծառի չոր տերևը ձեռքում փշրելով լցրել են չիբուխները քաշել և թէ ալկոծութիւնից ազատուած ծովափնացները ինչպէս ամենից առաջ թամբաքուի վերայ են ընկել։

Գ. թամբաքուն ծամելու սովորութիւնը, որ տարածուած է աւելի նաւաստիների մէջ, ինչու որ արգիլուած է ծխել նաւի այս կամ այն մասում, ամենից վնասակարն է. նա բորբոքումն է պատճառում բերանին, լորձնական ջղերը դրգռելով՝ բաւականաչափ լորձունք թափել տալիս, որից առաջանում է ստամոքսի ցաւը, մարմնի նիհարիլը։

Թամբաքուն կուլ տալով սիրտ է խառնում, ցնցում, ուշաթափութիւն, կաթուած և մինչև անգամ մահ պատճառում։ Պատմում են երեք երեխայի մի օրուայ մէջ վախճանուիլը մի ինչ որ հիւանդութեան համար նրանց դըլուխը թամբաքջուր քսելուց։

Սանտոլ բանաստեղծը վախճանուած է մի բաժակ գինուց, որի մէջ լուծուած է եղել թամբաքին։

Մեզանում մի քանի վատ սովորութիւն մտած է, որ աւելորդ չենք համարում յիշել խնջոյքների մէջ մէկին արբեցնելու մտքով տանում ես չիբուխի տակի սև մնացորդը, որ ամբողջապէս թոյն է, ձգեցին գինու բաժակի մէջ, որից ի հարկէ սիրտ թափել է առաջանում։

Չիբուխի այդ մնացորդը գործ են ածում նաև իրրև ատամնացաւի դեղ, որ կարող է կուլ գնալ և վտանգաւոր հետևանք առաջացնել։

Որդևոէր ծնողները սիրում են փոքրիկ մանուկների բերանը տալ իրենց ցիգարը կամ պապիրոսը և կամ թէ չէ իրենց բերանի ծուխը փչել նրանց երեսին և այլն։

Մէջ բերինք և ծխողների կուսակիցների կարծիքը և տեսանենք թէ որչափ իրաւացի են դրանց ասածները։

Առհասարակ ընդունում են, որ ծխախոտը չափաւոր գործածութեամբ մեղմացնում է մարդու յոգնածութիւնը, նրան մի հաճելի զգացմունք ներշնչում, ախտում ձանձրութիւնից, թեթևացնում ցաւը, կտրում քաղցը և ծարաւը և հեշտացնում մարսողութիւնը։

Ճիշտ է, ծխելը ինչ ինչ հանգամանքներում ունի իր մասնաւոր օգուտը, բայց ով կարող է երաշխաւորել, որ մարդիկ ի չարն չեն գործ դնում այդ և չափաւորութեան սահմանից դուրս գալիս և մինչ պակասում են թեթևացուցիչ միջոցները. ինչ վերաբերում է թէ թամբաքուն հացի և ջրի տեղ կարող է բռնել, այդ սխալ կարծիք է, քանի որ յայտնի է, որ նա ոչ սննդարար զօրութիւն ունի իր մէջ և ոչ էլ զովացուցիչ. այլ նա խանգարելով ստամոքսի գործողութիւնը՝ կապում է ուտելու ախորժակը ի վնաս առողջութեան։

Մի բան միայն ճշմարիտ է, որ նրան անձնատուր եղած անձին հաճելի զգացմունք է ներշնչում—ծուլութեան մէջ անցնելու, ոչինչ չանխատելու և մանելու մի տեսակ երազական աշխարհ՝ ուր ոլոր մոլոր չերտերով սլացող թամբաքուի ծուխի հետ յաւիտանում են և նրա բոլոր մտածութիւնները...

Նապօլէօն I ասած է. «Ծխելու սովորութիւնը մի զուարճութիւն է, որ լաւ է միայն ծոյլերին ձանձրութիւնից ազատ պահելու»։ Իսկ Մոնթեսքիոյի կարծիքն է. «Ամեն դար, ասում է այդ հռչակաւոր հեղինակը, ունի ինչպէս իր սովորութիւնները, նոյնպէս և գժութիւնը, որից ոչ մի ժողովուրդ չէ կարողանում ազատ մնալ։ Միմիայն չրաւի գըժութիւն, վարքի ապականութիւն չէ տեսնել ամբողջովին մի ժողովուրդ, մի հասարակութիւն, մի ընտանիք ծխած հայրական օջախը, կուրօրէն վազում է դէպի մի ապանիչ, մի դաւաճան թոյն, մի թոյն՝ որ միևնոյն ժամանակ հարուածում է թէ առողջութեան, թէ ընդհանակութեան, թէ նիւթականին, թէ մարդու ֆիզիքական և բարոյական վիճակին, մինչև անգամ մի ազգի քաղաքական գոյութեան։ Եւ միմիայ բոլոր գժութիւնների մէջ ամենավատը չէ այդ, որ քաշում տանում է իրեն հետ մի ազգ դէպի ինքնասպանութիւն այդ թոյնից»։

Ցիրաւի վիճակագրական տեղեկութիւններով հաստատուած է, որ ծխող աշակերտների մտաւոր ընդունակութիւնը աւելի նուազ է, քան չծխողներինը և թէ թամբաքուի գործածութեան հետ աւելանում է և խելագարների թիւը։

Ցիշենք և այս թէ՝ տարեկան որչափ հրդեհներ են պատահում ծխախոտի չնորհիւ, երբ ծխելուց յետոյ լուցկին կամ պապիրոսի մնացորդը անուշադիր չպրտում են և քանի քանի ընտանիքներ, հենց մեր կովկասում դրա չնորհիւ զրկուում են իրենց բոլոր կարողութիւնից։

(Կը չարունակուի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՄԲՈՒԻ, 2 նոյեմբերի.—Ըստ երեւոյթին մօտիկ ապագայում մեր գիւղի գլխաւոր արդիւնաբերութիւններից մէկին էլ ծխախոտն է լինելու։ Մենք այս ասում ենք հիմնուելով այն եռանդի վերայ, որով մեր գիւղացիները կպել են այդ արդիւնաբերութեան։

Սրանից մի քանի տարի առաջ Ղարախանբեկլու գիւղացի մի պարոն գնալով Կուբանի նահանգը, բաւական ժամանակ այնտեղ ուսումնասիրելով ծխախոտի արդիւնաբերութեան բոլոր պայմանները, վերադառնում է տուն և սկսում է ծխախոտի մշակութեամբ պարապել։ Բաւական ժամանակ ոչ ոք չէ հետևում նրա օրինակին, մինչև որ անցեալ տարի մեր գիւղացի մի պարոն յատուկ դրա համար վարպետ բերել տալով Տրապիզոնից, սկսաւ ինքն էլ ծխախոտի մշակութեամբ պարապել։ Ջնայելով որ հենց սկզբից մեծ դժուարութիւնների հանդիպեցան, առաջին ցանքը փչացաւ, բայց այդ չյուսահատեցրեց պարոններին և նրանք երկրորդ անգամ ցանեցին, և չնայելով որ ծխախոտը չատ ուշ մնաց և մի մասն էլ ցուրտը տարաւ, բայց և այնպէս մօտ 300 պուդ ծխախոտ ստացան։ Մի և նոյն տարին գիւղացիներից մի երկուսն էլ նոյն վարպետի առաջնորդութեամբ ծխախոտի սերմը ցանելով, նոյնպէս բաւականաչափ արդիւնք ստացան, այնպէս որ այժմ մեր գիւղում գտնւում է մօտ 800 պուդ ծխախոտ։

Այս բանից քաջալերուելով, այժմ մեր գիւղացիներից չատերը մտադիր են զալ տարուանից ծխախոտ ցանելու. այսպէս օրինակ Ա. Թ-ցը վերոյիշեալ վարպետի հետ պայմանաւորուել է, որ եկող տարուան 120 պուդ ցորենի ցանքի տեղ ծխախոտ հասցնէ։

Պէտք է ասել, որ ծխախոտի ցանքը բացի չափազանց չահաւէտ լինելուց արդիւնարերողներին, նա մի և նոյն ժամանակ օգտակար է և գիւղականներին չատ աշխատանք և չատ ձեռք պահանջելուն համար, բայց ամբողջեան այդ աշխատանքը չատ թեթև տեսակի է, ուստի դրան կարող են մասնակցել և կանայքն ու աղջկերքը. այս տարի օրինակ կանայք և աղջիկները աշխատում էին բոլոր ծխախոտի ցանքերում և ստանում էին օրական 20 կոպէկ. վերջին ժուլանների վերայ քաշելու համար ստանում էին երկ երկու կ., փունջ կապելու համար օրական 15 կ., իսկ տղամարդիկ ստանում էին 40—50—60 կոպէկ։

Սակայն պէտք է այս էլ ասել, որ ծխախոտի արդիւնաբերութիւնը ամեն մարդի գործ չէ. դա ունի նրբութիւններ, որոնց միայն փորձով կարելի է հասկանալ և ճանաչել. այդտեղ ամենափոքր սխալը՝ կարող է ամբողջ արդիւնաբերութիւնը ոչնչացնել. բացի այն, որ հմտութիւն է պէտք նրան մշակելու համար, աւելի ևս հարկաւոր է և մեծ գումար, որի կորուստը կամ կրկնապատկութիւնը, եռապատկութիւնը, քառապատկութիւնը...կախուած է մի մարդից. Ծխախոտի խելացի արդիւնաբերողը կարող է մեծ չահ ստանալ, բայց մի և նոյն ժամանակ կարող է և կորցընել բոլոր իր ունեցածը և աղքատանալ՝ եթէ չունի պահեստի գումար։

Ծխախոտի արդիւնաբերութիւնը ազգքատ դասակարգի գործը չէ, մանաւանդ՝ եթէ այդ աղքատը տգէտ է ծխախոտի արդիւնաբերութեան մէջ։

Ս. ք. Տ-Ստեփ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Times»-ին վիեննայից հեռագրում են, որ իբր թէ Աւստրիան չպիտի հակառակի Մինգրէլիայի իշխան Նիկողայոսի Բօլղարիայի գահի կանդիդատութեան։

—Վիեննայից «Standard»-ին գրում են, որ իբր թէ Աւստրիայի և Անգլիայի դաշնակցութեան առաջին պայմանը այն է, որ Բալկան թերակղզու ազգերից դաշնակցական պետութիւն կազմուի և դրանց գլուխ դնեն Աւստրիային։ Միևնոյն ժամանակ այդ բանին համակրում են Թիւրքիան և Իտալիան։

—Ռուսական լրագիրներից միայն «Свѣтъ»-ն է, որ նշանակութիւն է տալիս Սալսբիւրիի և գր. Կայսնօկիի ըսպառնալիքներին, մինչդեռ «Рус. Кур.», «Нов.», «Моск. Вѣд.», «Нов. Вр.»ն ամենևին նշանակութիւն չեն տալիս։

—Մօտերքս Տօնկինում վախճանուած ֆրանսիական ներկայացուցիչ Պոլ-Բէրի թաղման համար նշանակուած է 10,000 ֆր., իսկ նրա այրի կնոջ իրաքանչիւր տարի 12,000 ֆր. վարձատրութիւն։

—Բիրմանիայից «Բէյտերի գործակալութիւնը» հաղորդում է, որ սովորական օրէնքները բաւական չեն երկրում կարգը պահպանելու համար, այլ հարկաւոր կը լինին արտաքոյ կարգի օրէնքներ հրատարակել։ Երկրի մէջ ապստամբները ամենախիստ կերպով պատժում են այն բրիմանացիներին, որոնց վերայ կասկած կայ, թէ նրանք Ֆրանսիային համակրողներից են։

—Լրագիրները հաղորդում են, որ Լօնդօնի ռուսական դեսպան Ստաալը անգլիական արտաքին գործերի մինիստր լօրդ Իդրսլէյի հետ բաւական չափ խօսակցութիւն է ունեցել Սալսբիւրի վերջին ճառի առիթով։ «Indépendance Belge»-ը այժմ հաղորդում է, որ «պ. Ստաալը այժմ Լօնդօնից հեռանում է—երկար ժամանակով արձակուրդ ստանալով»։

—«Моск. Вѣд.»-ին հեռագրում են Ժուրժեվօից. «Այսօր տեսակցութիւն ունեցայ լօլղարական խնամակալութեան հետ. նրանք վճռել են դիպլօմատիկական յարաբերութիւնները կըտրել Ռուսիայի հետ»։

—Վիեննայից հեռագրում են «Нов.»-ին, որ նոյեմբերի 4-ին, դիւկացիայի նստում պատգամաւոր Ֆայլը չնորհակալ եղաւ կայսրակի այն բանի համար, որ նա իւր յայտարարելովը, Աւստրիային բարեյաջող հանդամանքի մէջ դրեց դէպի Բօլղարիան, դրաւ Անդրային նկատեց, որ Աւստրիան հարկաւոր եղած օգուտը չկարողացաւ քաղել Գերմանիայի միութիւնից։ Գրաֆ կայսրակին յայտարարեց, որ այդ միութեան հետևանքը բերլինեան դաշնադրութեան անձեռնմխելիութիւնն է, որի զօրութեամբ էլ Ռուսիան ոչ մի առաւելութիւններ չունի Բօլղարիայի վերաբերմամբ։ Գրաֆ Զիչին կարծիք յայտնեց Բալկանի կառավարութիւնների միութեան օգտին։

—«Բէյտերի գործակալութեան» հեռագիրը հաղորդում է, որ Աւղանիստանում ապստամբութիւնը ճնշուած է բոլորովին։

—Ուսումնարանական խորհրդի համար ընտրութիւններ, բացի 4-ից, Ֆրանսիայի բոլոր նահանգներում եղել են։ Միայն 11 նահանգում խորհրդի անդամների մեծամասնութիւնը պահպանողականներից է կազմուած, իսկ մնացած բոլորի մէջ—հասարակապետականներից։

—Բերլինեան թերթերը մեծ հետաքրքրութեամբ հետևում են, թէ ինչպէս և ուր են տեղաւորում Պօզնանի նորընտիր լեհ զինուորներին։ Բանից դուրս է գալիս, որ նրանց բոլորին ուղարկում են Գերմանիայի հիւսիսային գաւառները և մանաւանդ Շլէզվիգի գաւառը, որպէս զի որքան կարելի է հեռի լինին կրօնաւորների և «սիրուն լեհուհիների» ազդեցութիւնից։

—Անցեալ հոկտեմբեր ամսում Ֆրանսիայի ստացած կողմնակի տուրքերը 9,600,000 ֆրանկ պակաս է հաշուեկշռում նշանակածից, իսկ 2,200 000 ֆրանկ աւելի է անցեալ 1885 թուի հոկտեմբերին ստացուած կողմնակի տուրքերից։

—«Times»-ը հաղորդում է, որ Ծովակալ Համիլտոնը և Ծովային միւս պատները աննպատակ կարծիք են յայտնել Անգլիայի՝ չինական ծովերում սերացած Համիլտոն նաւահանգստի մասին։ Ծովակալը ապացուցանում է, որ դա ռազմական կէտ կարող է դառնալ միայն այն դէպքում, երբ դրա վերայ մեծ ծախս անուի։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երկրիս ստացած պատկենի հաստատութիւնը։ Անգլիայի մի գիտնական ընկերութեան վերջին նիստում երկրաբան Լէյրան յայտնեց այն արդիւնքները, որ նա ստացել է Սերբիայի և հիւսիսային Ամերիկայի սահած երկրների կեղևի հաստութիւնը չափելով։ Եակուտսկում, որ Լենա գետի ափին է գտնւում և սահմանակից է Սառուցեալ ովկիանոսին, հողը սառուցով է պատած մինչի 67 սաժէն խորութեամբ։ Հիւսիսային Ամերիկայում 64° հիւսիսային լայնութեան և 126° արևմտեան երկարութեան տակ երկրի կեղևը սառած է 7 սաժէն հաստութեամբ։ Լէյտընանտ Բէյը՝ Բարրօ հրուանդանի վերայ պատուիրել է նաւաստիներին, որ մի հոր փորեն. քննութիւնից երևացել է, որ 9 սաժէն խորութեան մէջ Ցելդիուսի 20° ցրտութիւն է եղել, որ չէ փոխուել մինչի 11 սաժէն խորութեամբ փորելիս։ Լէյտընանդ Բէյը հիմնուելով իւր արած փորձերի վերայ՝ այն եզրակացութիւնն է անում, թէ հիւսիսային Ամերիկայի տակ պէտք է որ երկիրը մօտ 200 սաժէն խորութեամբ սառած լինի՝ եզրակացնելով որ իւրաքանչիւր 19 սաժէն խորութեան՝ 1° տաքութիւնը բարձրանում է։

***

Մեռածների այրուժը. Մեռածների դիակները այրելու միտքը պաշտպանութիւն է գտնում նոյն իսկ Անգլիայի հոգևորականութեան կողմից։ Կարլէյլի եպիսկոպոսը մօտ օրերս Պրեստօն-Պատրիկի նոր գերեզմանատունը օրհնելով, այն միտքը յայտնեց, թէ մեծ քաղաքներում անհրաժեշտ է դիակների այրումը—ժողովրդի առողջապահական տեսակէտից։ Եպիսկոպոսի կարծիքով, ոչ մի ծիսակատարութիւն, ոչ մի մեծատիպաշտութիւն, ոչ մի կրօնական հաւատալիք չպէտք է իւր փառատաք բերել դիակների այրման դէմ։ Այն խնդիրը վճռելիս, թէ ինչ անենք մեռածներին,—աւելացրեց նա,—մենք պէտք է բացառապէս կենդանիների առողջութիւնը ունենանք աչքի առաջ։

***

Մի մեծ հրդեհ։ Լիվերպուլում, «Horny Boek-ի» մէջ մի մեծ հրդեհ պատահեցաւ, որ մօտ հազար հակ բամբակ և ահագին քանակութեամբ հացահատիկներ ոչնչացրեց։ Մի քանի ժամուայ մէջ բոցը պաշարեց բոլոր չինութեանը և կարճ ժամանակի մէջ այրեց, մոխիր դարձրեց մօտ երկու և կէս միլիոնի ապրանք։

***

Խեղճ ուլիկի կատակը. «Երաժշտութեան ճեմարանի» նախկին տէրը՝ վէնիամին Մուլը, մի օտարոտի կըտակ թողից իրենից յետոյ. կտակը սկսւում է այսպէս. «Որովհետև հոգի ունեցող մարդ չատ քիչ կայ այժմ, ուստի բոլոր իմ կարողութիւնս ես կտակում եմ անասուններին»։ Նրա կարողութիւնը հասնում է 150,000 մարկի։ Կտակի մէջ «կենդանիների հովանաւոր» ընկերութեան պատուիրում է, որ գնեն Բերլինում բոլոր ծանրութիւններ կրող ձիերին, իսկ չորսական մարկ էլ նշանակում է քաղաքային այն պահապաններին, որոնք կենդանիներին չարչարելու մասին կը տեղեկացնեն վարչութեան։

***

Հարբուխի անյարմարութիւնը։ Վերազիտում են բանիերից մինը։

—Ինչը պատճառ եղաւ ձեր բանտարկութեան, հարցնում է վերատեսչը բանտարկեալներից մինին։

—Հարբուխը, ձերդ գերազնութիւն։

—Հարբուխը։

—Այո... ես գիշերը բարձրացայ պատուհանի վերայ, որպէս զի իրերը գաղտնի, բայց յանկարծ հարբուխից փռչտացի—և ինձ բռնեցին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-Դ Ա Ր»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

11 Նոյեմբերի

ՕԴԵՍՍԱ. Վարնալից տեղս ժամանեց «Память Меркурія» մարտկանաւը. նրա եռւից գալիս է «Забіяка» մարտկանաւը: Այս նաւերը հինգ օրուայ կարանտինի են դրուած: Ասում են, որ այս նաւերումն են բազմաթիւ ռուսահպատակները և Վարնալի հիւպատոսը:

ԼՕՆԴՕՆ. Ռուսական դեսպան Ստաալը չորեքշաբթի ուղևորվում է դէպի Գերմանիա, որտեղից նա իւր ընտանիքը պէտք է Պետերբուրգ տանէ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

Երեք ամսական դրամարժէքը

Լօնդօն $22^{21}/_{32}$, $22^{21}/_{32}$, $22^{21}/_{32}$.
Համբուրգ $193^{7}/_{8}$, $194^{1}/_{4}$, $193^{7}/_{8}$.
Պարիզ $241^{1}/_{2}$, 241.
Պօլուիմպերիալ 8 ր. $63^{1}/_{2}$ կ. սակ.
Մաքս. կուպոն. 167 ր. — սակ.
Արծաթ . . . 1 ր. 35 կ. սակ.
Բօրսային դիս. 3 և $6^{1}/_{3}$ %
Պետակ. բանկի 5% տոմսեր.
1-ին շրջանի 100 ր. 62 կ. սակ.
2-րդ » . . 99 ր. 87 կ. սակ.
3-րդ » . . $99^{1}/_{2}$ ր. կ. դն.
4-րդ » . . 99 ր. — կ. սակ.
5-րդ » . . 99 ր. 37 — սակ.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր
1-ին շրջանի 99 ր. — կ. սակ.
2-րդ » . . 99 ր. — » սակ.
3-րդ » . . 99 ր. — » սակ.
Առաջին ներքին փոխառութեան 5% տանող գումարի տոմսեր . . . $239^{1}/_{4}$ ր. — սակ.
«2-րդ . . . 221 ր. — սակ.
$5^{1}/_{2}$% բենաեր $104^{1}/_{4}$ ր. — սակ.
Ոսկէ բենա. 167 ր. — սակ.
Ազնուական Հողային բանկի գրաւաթղթերը . $98^{3}/_{4}$ ր. կ. դն.
Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է:

12 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը իւր ամուսնու և տղայոց հետ վերադարձաւ արտասահմանից:

Բժշկա-անգամագննական ճեմարանի սրօֆեսօր Կօլօմնինը երէկ անձնասպանութիւն գործեց: Մի քանի օր առաջ նա մի կնոջ օպէրացիայի ենթարկեց. թէև օպէրացիան բոլորովին կանոնաւոր էր արել, բայց կինը մեռաւ, և այս հանգամանքը այնքան վշտացրեց Կօլօմնինին, որ անձնասպանութեամբ նա վերջ տուեց իւր կեանքին:

ԲՈՒԿԱՐԵՍՏ. Իշխան Ալէքսանդրի գահընկէցութեան մասնակից պաշտօնաթող մի քանի սպաներ, այժմ գտնւում են Րումելիայում: Ասում են, որ այդ սպաները յայտնել են Խնամակալութեան, որ եթէ նրանք պաշտօնից չհեռանան, այն ժամանակ նրանք շուտով ապստամբութիւն կը բարձրացնեն:

Րուշչուկի և Վիդդինի ռուսական հիւպատոսները — Նաումխինը և Կարցեվ ժամանեցին Բուքարեստ: Րուշչուկից հեռանալիս այն շոգենաւը, որի մէջ էր գտնւում Նաումխին հիւպատոսը, տեղական քաղաքապետ Մօնակովը և դիմադիր կուսակցութեան պարագլուխ Զաքարի Սաւյանովը ճառ. խօսեցին, որի մէջ յայտարարեցին, որ հիւպատոսների հեռանալը կորստաբեր է Բոլղարիայի համար, որ Ռուսիայի և Բոլղարիայի յարաբերութիւնների ընդհատումը անհնարին բան է, և որ բոլոր սլաւեաններըն, ինչպէս Բոլղարիայում, նոյնպէս և Մակեդոնիայում կը վնասուին բոլորի այսպիսի դրութիւնից. նրանք նոյնպէս ասացին, որ բոլղարները պատրաստ են ընդունելու այն բոլոր էական պայմանները, որ կառաջարկէ Ռուսիան և ցանկանում են միայն, որ թողնեն սահմանադրութիւնը:

ԲՕՄԲԵՅ. Գիլզանների ապստամբութիւնը մեծանում է. գիլզանները յաղթեցին աւղանական էմիրի զօրքերին. էմիրի զօրքի մի մասը ամբաձիդների հետ անցաւ գիլզանների կողմը: Այս ապստամբութիւնը անգլիացիների հետ կայացած դաշնակցութեան դէմ ուղղուած ազգային լողոքի ձև ունի. նրանց առաջնորդում են կրօնական մոլեռանդները. ապստամբութեան անմիջական առիթ եղաւ այն փառաւոր ընդունելութիւնը, որ ցոյց տուին աւղանական սահմանապիճը որոշող անգլիական կօմիսիային: Այս ընդունելութիւնը ժողովրդի մէջ կասկած ծնեցրեց, թէ էմիրը կարող է համաձայնել, որ անգլիացիները գրաւեն Աւղանիստանը:

Կ. ՊՕԼԻՍ. Գեներալ Կաուլբարսը հասաւ այստեղ և դեսպան Նելիդովի ուղեկցութեամբ երէկ մեծ վեզիրին և արտաքին գործերի մինիստրին այցելեց:

ՅՈՒՐԹԵՎՕ. Նաւ քաղաքապետների և պատգամաւորների հարցին—Ռուսիայի հետ յարաբերութիւնները կարուելուց առաջացած դրութեան մասին, բօլղարական կառավարիչները վերջապէս պատասխանում են, որ նրանք Ռուսիայի պահանջներին ընդդիմանում էին մի քանի պետութիւնների խորհրդով:

Հիմնադիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հինգշաբթի, Նոյեմբերի 13-ին և Կիւրակի, Նոյեմբերի 16-ին, Նիկիտինի ցիրկում ամպային պատկերները

ՖԻԶԻԿ Կ. Օ. ԿՐԱՈՒԶԷԻ

Այսօր մեծ ներկայացումն է, մանրամասնութիւնները ափիշայում և ծրագրում: Սկիզբն է երեկոյեան $7^{1}/_{2}$ ժամին:

1—1

ՇԱՏ ՉԱՓԱՒՈՐ ՎԱՐՁԱՏՈՒԹԵԱՄԲ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ ՓՈՐՁԱՌՈՒ

ՀԱՇՈՒԱՊԱՀՆԵՐ,

Որոնք կարող են ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵԴԱՆԱԿՈՎ հիմնաւորապէս վարել առևտրական ամեն ճիւղերին վերաբերեալ հաշիւներ, թէ ՀԱՅՈՑ և թէ ՌՈՒՍԱՑ լեզուներով:

Ընդունում եմ նոյնպէս Ապացուցագրերի, հաշուեցոյցերի և հաշուեգրքերի երեսով ՀԱՇԻՒՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ պատուէրներ:

Իմ հասցէն՝ «Նոր-Դարի» խմբագրատան մէջ:

(р) 20—19



ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԶՐԿԱՆՔԻ ԶՈՀ

դրաւած 4 գործողութ.

Վաճառւում են 80 կոպէկով Տփխիսի գրավաճառանոցները և Երևանում Հեղինակը:

10—5

Իսկական կարեմեքենաներ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

աշխարհի մէջ կարեմեքենաների բոլոր ցուցահանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարևոր ընկերներ ատն տիկիններին և ազնիւ օգնականներ բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Միրիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ:

Բագուում. Մ. Քալէնեան փողոցում, Միրզա Սաադեանի տ. | Բաթումում. Պօլիցիական փողոցում, Թէրզի օղլու տ.
Քութայիսում. Բուլվարի դէմ, Ջերեկովի տ. | Թեհրանում. Մայշ-Մէլդանի դէմ, բուլվարի վերայ:

Եւ նրանց ճանապարհորդող գործակալներէ մօտ



ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

ԳՆԵՑԱԼԻՆԳԵՐ

ԶԻՆԳԵՐԻ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԵՆ

1) Մեքենաները ունին ընդարձակ գործարան և համաշխարհային հռչակ: 2) Գները ամենաչափաւորներն են և միայն Զինգերի ընկերութեան մէջ: 3) Ամեն տարի սպրծ վում է մօտ 700,000 հատ: 4) Մեքենայի լաւութեանը չէ կարողացել նմանեցնել ոչ մի կարեմեքենայի գործարան: 5) Թէ մեքենաները և թէ նրանց օգնական գործիքները միշտ լաւանում և կատարելագործվում են: 6) Կարելի է ընտրել ամենամեծ քանակութեամբ և ամեն տեսակ ընտանեկան, արհեստաւորների համար մեքենաներ նաև մասնագիտական մեքենաներ գլխաւորապէս կարելու համար: 7) Այս հռչակուած մեքենաները ամեն մարդ հեշտութեամբ կարող է ձեռք բերել: Գնողները կարող են, եթէ կամենում են գրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է շաբաթով, կամ ամսով և կամ ժամանակամիջոց սահմանել գրամը վճարելու համար: 8) Մեքենայի վերայ կատարելագործ և հիմնաւոր սովորելը ձրի է հմուտ վարպետ-հիններից համար:

Ց. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնվում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մեոմաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաչափաւոր գներով:

60—41

Дозволено цензурою. Тифлисъ, 12-го Ноября 1886 г. Տպարան Մ. Գ. Փոփիեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ. и К-о Гол. пр., д. № 41